ԱՌԱՋԱՐԿ
«ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմքը ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության (այսուհետ՝ Սահմանադրություն) 60-րդ հոդվածի 3-րդ մասը այն է՝ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի,նաև այլոց իրավունքների և ազատությունների պաշտպանության, ինչպես նաև հանրության գերակա շահերի ապահովման նպատակով,առաջարկումեմ «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ Օրենք) վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենքը **«Հանրության գերակա շահերի ապահովման նպատակով սեփականության օտարման մասին»**:

Առաջարկում եմ նաև **«հասարակության և պետության»** բառերը օրենքի ամբողջ շարադրանքում փոխարինել **«հանրության գերակա շահ»** բառերով:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Սամանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս, օրենքները պետքէ լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի հնարավոր լինի ապահովել սահմանադրության հիմնարար արժեքների ու սկզբունքների իրացման օրենսդրական և կառուցակարգային երաշխիքների ստեղծումը(տես նաև Սահմանադրության 80-րդ հոդվածը):

Միաժամանակ համաձայն «Նորմատիվ իրական ակտերի մասին»Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի՝ նորմատիվ իրավական ակտի չպետք է հակասի հավասար կամ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտին, իսկ